Սանահին, Միխայիլովկա, Ալլահվերտի, Հայրում Բոլիս–Խաչէն, Սաղախլու, Դամիա, Շուլավեր եւն.: Դեկտեմբերի 24–ից սկսած, վրացիք մեծ ուժեր կենդրոնացնելով Սաղախլուի եւ Շուլաւերի շրջանում, ճիշդ է, կանգնեցրին հայկական զօրքերի առաջխաղացութիւնը, սակայն, մինչեւ Դեկտ. 27–ը չկարողացան ոեւէ յաղթանակ տանել, որ թուլացնէր իրենց կրած պարտութիւնների տպաւորութիւնը: Դեկտեմբերի 27–ից մինչեւ 31–ը մեր զօրքերը ձախ թեւի վրայ թուլանալով (շնորհիւ բծաւոր տիֆի, որով բռնուել էին հրամանատարական կազմի եւ զինուորների մեծ մասը) վրացիների եւ Բորչալուի թիւրքերի ճնշման տակ, յետ քաշուեցին մի քանի առաջաւոր դիրքերից՝ Շուլաւէր, Դամիա, Բոլնիս–Խաչէն եւն. բայց կռուի գլխաւոր թատերաբեմում՝ Սաղախլուի շրջանում՝ նրանք այնպիսի կատաղի դիմադրութիւն ցոյց տուին վրացիներին, որ վերջիններս հարկադրաբար պէտք է հրաժարուէին Լոռին վերադրաւելու մտքից:

Դեկտեմբեր 31–ի զինադադարը եկաւ վաւերացնելու վրաց կառավարութեան ռազմական անյաջողութիւնների փաստը:

Այս անյաջողութիւնների տպաւորութիւնը վրաց հասարակութեան մէջ թուլացնելու եւ միաժամանակ նրա ռազմական տրամադրութիւնները հրահրելու համար՝ Ժորդանիայի կառավարութիւնը այլ միջոց չդտաւ, քան թէ Վրաստանում «հայկական վտանգի» առասպել հնարելը եւ վրաց ժողովրդի մէջ ազգայնական բնազդներ զրգռելը:

Վրաստանի հակահայկական հալածանքները, մանաւանդ պատերազմի առաջին շրջանին, այս պղտոր աղբիւրից էին առնում իրենց սնունդը: Եթէ կ'ուզէք, սա էլ մի տեսակ «պատերազմական անհրաժեշտութիւն» էր, յար եւ նման այն «անհրաժեշտութեանը», որ զրգռեց երիտասարդ թիւրքերին, Սարիղամիշի խայտառակ պարտութեան պատճառով առաջացած ժողովրդական յուսալքութիւնը դարմանել հայկական տարագրութիւններով եւ կոտորածներով: Բայց մենք կարո՞ղ ենք, նման անհրաժեշտութիւններ հասկանալու կամ ըմբռնելու համար, Ժորդանիային եւ իր ընկերներին Էնվէրների եւ Թալէաթների չարքը դասել...

Թէեւ նոյնպէս պատերազմի հետ կապուած, բայց փոքր ինչ տարբեր բացատրութիւն ունին այն հակահայկական հալածանքները, որոնք տեղի ունեցան զինադադարից յետոյ: Վրաց կառավարութիւնը գիտէր, որ պատերազմի հաշուեկշիռը նպաստաւոր չէ իր համար: Լոռին դնացել էր ձեռքից — դա ոչինչ. որովհետեւ վրաց ժողովուրդը երբեք էլ Լոռին իրենը չէր համարել: Բայց կար եւ պատերազմական միւս կորուստների հարցը: Շուտով պիտի գերիների փոխանակութիւն կատարուէր եւ վրաց հասարակութիւնը պիտի տեսնէր, որ իրենց զօրքերը մի քանի տասնեակ հայ ռազմագերիների փոխարէն հարիւրներով գերի են ընկել հայերի ձեռքը: Նա պէտք է վերահասու լինէր նաեւ, որ այդ զօրքերը ահագին քանակութեամբ պատերազմական աւար են թողել հայերի ձեռքը՝ առանց ոեւէ չօշափելի բան խլելու նրանցից: Նման հաշուեկշռով հանրային կարծիքին ներկայանալ՝ նշանակում էր փորձութեան ենթարկել կառավարութեան վարկը:

Եւ ահա, այս փորձութիւնից զերծ մնալու նպատակով, վրաց իշխանութիւնները ձեռնարկում են ռազմագերիների թիւը մեծացնելու եւ պատերազմական աւարը չատացնելու: Սրա համար առանձին ծանր աշխատանք չէր պահանջւում. հարկաւոր էր միայն Թիֆլիսն ու Վրաստանի միւս հայաշատ վայրերը պատերազմի դաշտ դարձնել, փողոցներում ու տներում հայ «ռազմագերիներ» որսալ եւ Վրաստանի հայութեան ստացուածքը այս կամ այն ձեւով թալանի ենթարկել...

Հայ–վրացական պատերազմի կապակցութեամբ կատարուած հակահայկական հալածանքների երկրորդ բացատրութիւնը պէտք է որոնել Վրաստանի հայութիւնը նօսրացնելու եւ տնտեսապէս թուլացնելու այն քաղաքականութեան մէջ, ինչպէս վերեւ տեսանք, որին, հետեւում էր Ժորդանիա–Բամիշվիլի կառավարութիւնը իր գոյութեան առաջին օրերից սկսած՝ վրաց չովինիստներին բաւարարութիւն տալու համար: Պատերազմը հարթել էր այս քաղաքականութեան ճանապարհը: Նրա իրականացման համար այլեւս կարիք չկար օրինական ձեւակերպութիւնների յետեւից ընկ–